


ՏԵՐ ԵՒ ՏԵՍՈՒՆ

Եւրոպական կամ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնարան ԱՐՇԱԼՈՒՅՍ Լուսորի ԳԱՅԻՐԷ (Եգիպտոս)

Adresse: H. TROUSSEAU Direct. - propr. du journal Arménien ARCHALOUYCE LE CAIRE (EGYPTE)

Les annonces sont reçues à des prix très modérés.



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Les annonces sont reçues à des prix très modérés.

ԲԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆ

Table with 2 columns: Description and Price. Includes items like 'Տարեկան 100 քիտի հատար ողջ դաս...' and 'Տարեկան 50 քիտի հատար ողջ դաս...'.

ԲԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՒԿ Եւ թղթատարի ծախքը Խմբագրութեան վրայ է:

Խմբագրութեան ուղղում գրութիւնք էս չիւն տրուի:

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ Կանխիկ վճարելի են:

ՀՐԱԳԱՐԱԿ ԵՒ ԱՅԻՐԷ ՀԱՅՈՐԴԻԻ ՑԱԽԵՐԳԷ ԿԱՅԻՆՆԵԱՅԸ

Գնել փափաքողը կրնան դիմել թերթիս Խմբագրութեան: Թղթակազմին գինն է 10 դահեկան ողջ:

ՄԻ ՍՈՒՆԱԲ

Հակառակ մեր բոլոր անդադարութեանց՝ Արշալոյսի բազմաթիւ բաժանորդներն քննելով միայն պարտաճանաչ գտնուելով իրենց բաժանորդագիրը հասուցին մեզ:

Յարգելի բաժանորդներ՝ Արշալոյսի կանոնադր հրատարակութիւնը կը պահանջէ խստի:

Անոր մէկ երկու ժամուան կամ քիչ մը աւելի յապաղումը Ձեր կողմէ անհնարիստ քննադատութիւններու կ'ենթարկուի:

Բայց խնդրենք, մէկ կողմի պարտաճանաչութիւնը յիշեցնելու ատեն՝ Ձեր բաժանորդագիրները փութացնելու մի՛ մոռնալ:

ԽՈՆԱՐՀ ԿԱՐԾԻՔՆԵՐ

ԺԲ.

ՑԱԽԵՐԳԷ ԿԱՅԻՆՆԵԱՅ

Ձայն արտայ յեկեցից «Հայեր ունի՞ք Սէր...» ՀԱՅՈՐԻՐ

Առ Արամ

Ինչ որ դիտուած է մարդոց ոմանց համար, որոնք պատճառ ժամանակ մը երեւան կ'ելլեն մասնաւոր գործ մը, նախախնամական կամ ճակատագրային պաշտօն մը կատարելու համար, կ'երեւայ թէ նոյնը կը պատահի նաեւ մտքի արդիւնքներու, գերբերու համար:

Մեր ներկայ կացութեան մէջ անկարելի է այս մտածումը չ'ունենալ թղթատելով Հայրերին Յաւերգը Հայրենեացը. գիրք մը որ ճիշդ ժամանակին կը հասնի:

Հայրենեաց աղէտները և Հայութեան աղէտները թշնամի դուրսէն, թշնամի ներսէն մէկ կողմէն հուր և սուր, միւս կողմէն հոգեւ ազնուութեան ապականացում, ազատութեան պոռնկացում. մէկ կողմէն այլակրօնի յարուցած հալածանքը, միւս կողմէն համակրօն այսահարներու ազգակործան մեքենայութիւնները: Ահա որսիւսի օրերու հասանք, որ պիտի մահաւիթ մը թնորոտներու մէջ կը շնչենք: Եւ ահա ինչու կ'ըսեմ թէ Հայրերին սրտազեղումները պատեհազոյն օրեր դժուարաւ պիտի գտնենք մեզ խեղճութեամբ համար իրենց տըլրամած վէտովտուձներով և հորմակոծ մուշեղութիւններով, սիրահարի քուրդուրանքով և նախանձայն զանգատներով: որ դեկորոյս մօր անհեղադ ժողովուրդներով և մայրախնդիր կորիւնի հոգեթափանց ողբ ու կոծերով:

Հայրերին ներկայացնելու հարկը չ'եմ

զգար: Սա այն քաջամտութ, կամ աւելի ճիշդն ըսելու համար՝ անձանթ, խորհրդաւոր ողբերգուն է, որ՝ տարիէ մ'աւելի ժամանակ իր սրտաշարժ քնարը հնչեցուց Սարգսյայի սիւնակներուն մէջ: Հարիւր ութսուն էջերով հատորը, որ այսօր մեր ձեռքը կը տրուի, անընդմիջաբար շարունակուող և իր երկնեանդովը աւելի սրբապարճակապէս հայրենաշունչ ցաւերգներուն, անտիպ մի քանի կտորներու, սրտնց շարքին մէջ կը գտնուին Վերու Հայ հասարական Բաշիկ Սարգսյայի, Հայրերին Բաշիկ Սարգսյայի և Հայրերին Բաշիկ Սարգսյայի Գրքերը: Յաւերգը Հայրենեացէն քաղաածներ չպիտի ընեմ: Հաւասարապէս սրտակեղծք դէպքերէն, անդադար դիրար գերազանցող զգացումներու արտայայտութիւններէն մը մէկը կրնամ հոս ընտրել: Այս հանգամանքներով օժտուած և բացարձակապէս մէկ նպատակի — հայրենասիրութեան անշէջ պահուելուն — նուիրուած գիրք մը փունջ մ'է ծաղիկներու կամ խորձ մ'է տատակներու, որոնց մէջէն ամենէն խնկարոյրը կամ ամենէն սրածայրը գտնելու համար ընթերցողը պէտք է ինքն իր զգացումները վերլուծէ և իր խիղճը հարցափորձէ: Եւ կողուած է անկեղծ յուշարարի դերը կատարելու ամէն Հայ անհատի քով, որ չ'լարանի խոստովանելու թէ Հայրենիք մ'ունի:...

Ազգ մը որքան պէտք ունի մարտահրաւէր, ելեւբարացուցիչ, ընդվիչ երգերու խորհուրդներու, յառաջ ուսման, վտանգն ու մահը արհամարհելու համար, այնքան ալ և թերեւս աւելի պէտք ունի իր բնաշխարհին թշուառութիւնները, աղէտները ներկայացնող սրտածիլի պատկերներու: սիրտերու մէջ հայրենեաց սէրը եւ ու զեւ պահելու, քաջասիրտները դիւցազնացնելու, վեհերոտները խթանելու, անտարբերները փղձկեցնելու և նոյն իսկ հայրենասիրտները յուզելու և ազալաւի բերելու համար: Հայրերի Հայաստանը կը մերկայցնէ մեր առջեւ, հետեւաբար այլ ևս աննեքիտի է ըսել աչքէ հեռու, սրտէ հեռու:

Համիմաստ բազմաթիւ կտորներու մէջ կարգադէպ, օրինակի համար՝ Ո՞րքան ըսցի ևս... որ և ըսէք թէ կը գտնուի՞ Հայրենասէրի սիրտ մը՝ որ չ'հեծկտայ, դաւաճանի աչքեր՝ որոնք չ'թրին երբ իրենց առջեւ պարզուած կը տեսնեն Հայաստան մը՝ Գիրտիստան եղած, դաշտեր ու լեռներ արևունով ներկուած, կոյսեր ու հարսեր՝ վայրագօրէն պրծուած, կին և մանուկ՝ անխընայ մորթուած, որը և այլի խժգօրէն շարժարուած և եւրոպան, Հայուն միակ յոյսը, ձեռքերը ծալած նստած... Ամենէն աւելի՝ յարգելի հեղինակը պիտի տիրէր եթէ ըսէի որ ինքը առաջինը եղած է հայրենեաց վրայ ողբացող բանաստեղծ: Հայկական մառախալաւ երկինքին վրայ լուսաշողող կը փայլին թրքահայ և ռուսահայ մատերով դժուած յուսատու, աւելի խորիտ, աւելի առնական, աւելի սրբապարճակապէս տողեր: Անոնց և Հայրերի մէջ մեծ տարբերութիւնը հոն է որ մինչդեռ առաջինները աւելի մայրն ուսուցիչներով, գրութիւն միշտ կը փրփրեն և կ'ընդվիզեն,

վերջինը՝ ընդհանուր առմամբ՝ յուշիկ կը քայլէ մտախոհ, մեղամաղձոտ, տեսակ մը յուսալիլ համակերպութեամբ և յենած աստուածային գիտութեան վրայ: Նա մեղմ է ոչինչ կ'սպասէ ի բաց առեւալ բան մը: Չոր՝ իր երկնից պատգամաբեր կը պահանջէ յանուն երկնից և որուն վրայ պիտի խօսեմ՝ քիչ ետքը:

Յաւերգը Հայրենեաց ի անխտելի առաւելութիւնը իրենց այժմեութեան մէջն է: Բանաստեղծական տեսիլներու, հայրենասիրական իրջներու, քրիստոնէական սրբ և յոյսերու քով ի բնական դէպքերու շարք մը, ինչպէս են «Հայրենիք» և «Նախնիք» կը «Հայ որդիներն օտարին ձեռքը» «Իոհարն ու Օհարն» «Իրեցազն հայ գեղը կուհին» «Երկու հայ հարսները» «Աւօին տղուն հարսնիքը» ևն. հատորիկին ամենէն աղեկտուր մասը կը կազմեն, մեզի յեղակարծօրէն յիշեցնելով համանման դէպքեր, որոնց անհաղգ պահներ կամ անզօր ակնանտեսներն եղած ենք, և որոնք իրենց վերջաւորութիւնը գտած չեն տակախի: Բայց այդ անախի եղելութիւնները մեզ չ'ապահանց դարմացնելու, շուարեցնելու ընդմիջ չ'ունենի, փաստի հեռու են անախիկալ ըլլալէ:

Արդարեւ, ազատութիւնը դիրբաւ չ'ըստացուի: Եթէ ճշմարիտ է որ առանց դժուարութեանց բաղխելու և զանոնք յաղթահարելու, առանց տառապանքի, զրկանքի տոկալու, առանց մահուան դժմարանելու անկարելի է որ և է առաւելութեան մը տիրանալ, ինչպէս կարելի է յուսալ որ մարիքներու մեծագոյնը, իրաւունքներու վեհագոյնը ինքնին պիտի գայ և մեզ պիտի հովանաւորէ իր երջանկաւէտ դրօշակին տակ: Իրաւ, Արարիչը իր արարածներուն ճիշտաբար պարգևած է այն բանը, որուն ետեւէն աւելի քան երբէք այսօր կը վազենք մեր մարմնէն մաս մը ձգելով մեր իւրաքանչիւր բայլ միտքին: Բայց կ'երեւայ թէ անհրաժեշտ է ստանկ ընել անհրաժեշտ համար բանաստեղծները, որոնք իրաւունքը կ'անդիտեն: Ճիշտ է որ եթէ բանաստեղծը իրաւունքը ճանչնային, ամենէն առաջ իրենք պիտի գարչէին թէ՛ իրենց անձէն և թէ՛ իրենց խորհուրդներէն... Ո՞հ, Արամ, որքան դձուած պիտի գտնեն զեւ, երբ լափազանք ըլլալէ ետքը, այս տողերը կարգաւով խորհիս: «Ազատ հողի մը վրայ ինչ մեծ քաջութիւն (բանաստեղծ) մը յորջորջելու համար, հեռուէն, խիստ հեռուէն... Այսպէս իրաւունքը կուտամ քեզի Արամ, բայց սա արգարացումով որ ես ուրոյն դատակարգ մը չ'եմ կազմեր միայն և միայն իմ անձովս: Արեւմտ ինչպէս կրնամ ընդվիզի տարազ իրենքու մեծամասնութեան կողմէն սիրուած և շոյուած սովորութեան մը դէմ:

Ընդվզումի մէջ ընդվզում... այսինքն, քաղաքային պատերազմ՝ այդ էր պակաս: Բայց կը խորհիմ որ այդ պակասն ալ լրացնելու վրայ ենք, մեր անհաղգութիւնը լրացնելու համար... Ա. ՊԱՆԱՆ

(Շարունակելի)

ԱՌԱՋԵՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՂԵՔՍԱՆԵՐԻՈՑ ԹԻՒ 146 ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՍԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թաղային Խնամակալութիւնս կը հրահարէ հանդուցեալ Յակոբ Կրտիկեանի փառանոցը: Ինչպէս ինչ ծանօթացնել, անձամբ կամ փոխանորդաբար ներկայանալով Աղբ. Առաջնորդարան, թուականս մինչեւ տասն օր: (Կնիք) Աղբ. 7 Նոյ. 1902 319-320

ԱՂԵՔՍԱՆԵՐԻՈՑ ՄԵՐ ԳՍՅՓԱԿՂՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԵՆՈՐԴԱՐԱՆ ԵՒ ԳԻՄՈՒՄՆԵՐԸ ԱՌԱՋԵՆԱՇՆՈՐԴԱՐԱՆ ԲՈՆՆԱԲԱՐՈՒՄ

Տիրացու Միհրանի քահանայութեան խնդիրը տակաւին չ'է վերջացած, ինչպէս կը կարծուէր: Չի նայելով որ Առաջնորդը մտղովը պայն ընդգրկուած հանդէպ ձեռնարկութիւնը դադարեցուցած էր, չի նայելով որ Խնամակալութիւնը իր վերջին նիստին մէջ նոյնը յանձնարարած էր առաջնորդին, չի նայելով որ Պատրիարքարանը յիշեալին հեռագրաւ հրահանգ տուած էր ձեռնարկութիւնը չի կատարել: Սրբազան Առաջնորդին, տակաւին, ոչ ալ Խնամակալութեան Փոխ-Առեւտապետը ձեռնարկը կազմ ըլլալ չ'են թուիլ ըստ իմի:

Կը լսենք թէ Սրբազան Առաջնորդը տեսակցութիւն մը ունեցել է նախարարապետ Վսեմ. Մուստաֆա բայա մէջնիկի հետ որու միջոցին յայտարարել է թէ իր պէրաթին ուժովը կարող է քահանայ ձեռնարկը և թէ կարգ մը խառնակիւնը արդէլ եղած են իր այդ անբնարարելի իրաւունքին զօր գործադրելու համար կառավարութեան օժանդակութիւնը խնդրել է. սրբի խօսքով՝ առաջարկել է Մուստաֆա բայային որ օտտիկանական ոյժով ի գործ դրուի տեսացու Միհրանի քահանայութեան ձեռնարկութիւնը: Իսկ Փոխ-առեւտապետն ալ աղբեցիկ անձնաւորութեանց միջնորդութեամբ միեւնոյն նպատակէն հասնելու կ'աշխատի կոր եղեր...:

Առաջնորդը կամ իրաւ չի հասկնար կոր և կամ չի հասկնալ կը կեղծէ կոր իր պէրաթին մէջ ձեռնարկութեանց առթիւ խրմբագրուած հատուածը:

Այդ հատուածը չի նշանակել ընտել թէ առաջնորդը ժողովրդին կամքէն անկալ ձեռնարկութիւն կրնայ կատարել ալլ աս միայն թէ ձեռնարկութիւն կատարող եկեղեցականը պիտի է նպակոպտութեան առջնական ունենալ: Առաջնորդը վարդապետի մը պէրաթին մէջ ինչո՞ւ համար ձեռնարկութեան խօսք չի կայ: Պարզ է ուրեմն որ առաջնորդի քաղաքական պաշտօնին հանգամանքը չէ այդ իրաւասութիւնը իրեն տրուողը, այլ լոկ իր կրօնական աստիճանը: Գալով կրօնական աստիճանի իրաւասու:

Թեանցը, սուլթան Համիտին պէտքով չէ որ անոնց չընկալուին պիտի դժէ, այլ Հայաստանեայց եկեղեցւոյ յոյ ծիսարանը և աւանդութիւնը:

Հայ եկեղեցիին անկախ ըլլալով՝ մընչեցարք ո՛չ մէկ կրօնական կամ քաղաքական իշխանութեան հպատակած է: Եւ հիմայ Առաջնորդն ու Խնամակալութեան եղական փոխ-ատենապետը կ'աշխատին կոր որ 1500 տարիէ ի վեր ազատ ապրող Հայ եկեղեցիին կառավարութեան գերիշխանութեան տակ գննեն...

Այլ ամօթ բան է ասիկա և անկարելի: Մեր անհատական և հանրային կեանքին մէջ եզրիպտական կառավարութեան ամենէն հըռ հպատակներն ենք: Բայց մեր կրօնքին մէջ ամենէն ազատ հասարակութիւններէն մէկն ենք և չենք կրնար թոյլատրել որ աշխարհի ո՛ր և է քաղաքական իշխանութիւն ինքզինքին ներքէ մեր կրօնական պաշտամունքի խնդիրներուն միջամտելու:

Կառավարական միջամտութիւն մը մեր տէրտէրի գուտ կրօնային խնդիրին մէջ՝ իրեն դէմ պիտի հանէ աշխարհի չորս կողմը գտնուող միջիննաւոր Հայութիւնը:

Կառավարութիւնը անուշտ անտեղեակ չէ մեր կրօնային դարաւոր առանձնաշնորհմանց և հարկաւարաբար պիտի զգուշանայ սխալ քայլ մը առնելէ այս խնդրոյն մէջ:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Աղէքսանդրոյ Պատ. Խնամակալութեան Գիւնատուներէն ստացանք ի հրատարակութիւն հետեւեալ պաշտօնական յայտարարութիւնն:

Անկողմնակալութիւնը պարտք կը գնէ մեր վրայ նոյնութեամբ հրատարակել զայն, մեզի վերապահելով անոր պարտնակութեան մէջ Խմբագրութեան ակնարկուած մասին մեր ընկերք ազգար և իրաւացի զիրտուլութիւններն:

ԱՌՄԱՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ Թիւ 140

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Արեւելք» և «Արշալոյս» լրագրաց վերջի թիւերուն մէջ ի շար կարգ մը անանհիմն լուրերու, Խնամակալութեան Փոխ-Ատենապետ Վսեմ Բարթոլ Պէյի կողմանէ ինչ ինչ արժէթի մոյզ վաճառմամբ ազգային անտուկին փնասաբեր տնօրինութիւններ կատարուած ըլլալը ծանուցուած լինելով, Խնամակալութիւնն օգտակար կը համարէ բացարձակապէս հերքել տայն ստոյգ լուրը, ըստ որում՝ ոչ Խորհուրդս և ոչ Մ. Վսեմութիւնը իւր պաշտօնավարութեան սկիզբէն ցայսօր, ու եւ է արժէթով չէ վաճառուած Աղբ. անտուկէն:

Աղբ. 4 նոյ. 1902

ԳԵՂԱՐՈՒՆԵՍԻ ԲԱՃԻՆԸ

Հետեւեալ գրութիւնը հեղինակին պատասխանատուութեան տակ կը հրատարակեն:

Գեղարուեստը որ իր բոլոր ճիւղերու մէջ մտնողը, ժողովուրդի կամ ազգի մը յատկանշական գործարար ստատիստիկն է ինչ համարուելով հանրակրթ, նոյն համայնքին զարգացման աստիճանադրոյցը յատկանշելու հանդիմանքն ալ ունեցած է, ցաւ է ըսել թէ՛ զեռ չէ ընդունուած մեր մէջ ճիշտ այնպէս, ինչպէս խնդրովատ կերպով մը սիրուած և յարգուած ըլլայ օտար ազգաց կողմէ:

Գեղարուեստի սէրը մերազնեաց սրտին մէջ շատ տարբերակն բան մը նոյն իսկ բացակայ ալ է կրնանք ըսել: Երբ աչքի առաջ ունենանք Եւրոպացիները:

Բը. պիտի տեսնենք թէ՛ որ աւուր յառաջիմութեան շաղկի մէջ հոյակապալ կ'արշաւեն: ո՛չ ապաքէն իրենց ձեռք անցուցած բազմազան յաջողութիւններուն մէջ մասն ալ՝ իրենց իւրացուցած գեղարուեստարուեստի կը պարտին: Երբ ասիէ մի քանի հարիւր տարիներ առաջ՝ աժգուծուած և յանցապարտ անցեալի վրայ մի յետագարձ ակնարկ նետենք, և մի քիչ հետագրքորենք հին ազգաց պատմութիւնները թղթաւել, պիտի տեսնենք թէ՛, այն աղբիւրը՝ որոնք աւելի՛ իրենց գոյութիւնը շնչած և ամուր կուտանի մը վրայ ամբողջուած են և ստոնք արտասուր խանգ ու եռանդով մը միշտ վառ պահած են իրենց սրտին մէջ այդ շինիչ աւելուք, և միշտ գեղարուեստի սիրահարներ եղած են:

Ինչո՞ւ սակայն մեր գանգուածը՝ մեր խմորը՝ չաղուած չըլլայ, մեզի քաղաքակիրթ աշխարհին մտեցնող, և տափալուծութեան մակարակէն դէպի վեր բարձրացնելու ծառայող ատոր կազմուածը հեղուկով: միթէ մենք խաւարակուած Արիւնի խորհրդէն սերած ազգ մը, և կամ աշխարհին մէջ մէկ աւելորդ բնուէրը եղած ըլլալու անմտածուած ժողովուրդ մը ենք, որ տակուին ընդունակ չենք եղած ըմբռնելու գեղարուեստը բառին բովանդակ լայն առոււտով, և իր կատարած գերը:

Մեր նպատակն զուրս է առ այժմ՝ Գեղարուեստի մասին ընդհանուր լայն անտութիւններ ընելով, մէկէ աւելի գործնական ապացոյցներ ու համոզիչ փաստեր մէջ բերել, ու անոր հատարած գերին՝ ինչպէս նաև մարդկային ազգին մարտեցած անհուն ծառայութեանց ուսումնասիրութեամբը զբաղել: զորո՞ւ մը՝ որ որքան հեշտ, այնքան ալ բարդ ու բազմազանակ կրնայ նկատուել, և կարելի չէ մէկ կամ երկու գրութեամբ մանրամասնութիւնը թերթի անհուկ էջերուն մէջ ամփոփել: Մենք ներկային մէջ պիտի բաւականանանք, գեղարուեստի ստորաբաժաններէն միտնելով որպիսին է երաժշտութիւնը, ինչորոյ տարակազ ընելով՝ այդ նրբերկան արուեստի հանդէպ մեր ունեցած ստանադարները թերք, և իրան աննշան վերաբերումը սահմանափակ գծերով պարզել յետոյ, մնացած ճիւղերու մասին պարտն ու պատան ծանոթութեան փոթորակուած ալ՝ մոտաւոր ապագայի մը վերապահել:

Երաժշտութիւնը, որուն մէկէ աւելի հոգեբանական վերլուծումը ուրուագծել զանց կ'անենք այս պահու, կրնանք անկրկաբար ինչ համոզմամբ մը ըսել թէ՛, մեր հայոց մէջ՝ բոլորովին մեռել առ մը մնացած է. երբէք չենք հետաքրքրուած անով, չենք սիրած, և ոչ ալ՝ լաւ տրամադրութեամբ և բարի ցանկութիւններ յայտնած ըլլանք մեր մտքերը անոր լուսահոս ջանքի փալկուած ճառագայթներով լուսաւորել:

Երաժշտութիւն. խանէնտէութիւն և տիրացուութիւն իրեն հոմանիշ բաներ կ'ընդունինք. բաներու գանգաւորութիւններն են մեզի համար, էականներն մէջ երբէք ասարեքութիւն մը չենք գտնար:

Մայրենի յոռետես մը յորջուրջուելու երկիւղը չէ որ մեզ կը թելադրէ հոս, անկողմորէն խոտովակելով թէ՛ իսկապէս ունեցած ենք թէ՛ և թիւով խիստ աննշան մեր երաժշտութեան փայլուն ներկայացուցիչները, կարաՄուրզա, Չուհանեան, Շահապետ, Սվաճեան Մեղեքեան հոման կարող վարպետներ, որոնք իրենց անխնայ և մեղաւորան գործունէութեամբը, արդիւնաշատ օգտակարութիւններ ցոյց տուած և օտար աստղերու ներքեւ փայլելով նոյն իսկ Եւրոպացաց անհուն մակարանց արժանացած են՝ առանց չափազանցութեան շքանիւն գիտելու: անվտանգ կրնանք ըսել թէ՛ իրենց ունեցած բնատուր սաղանդը շատ մը զգալիութիւն մեջ լայնութիւնը մէջ տարփողուած է. բայց պէտք է դիտարկ միեւնոյն ատեն թէ՛ ասոնց գոյութեամբը, արդարացում մը չենք կրնար գտնել երաժշտութեան մասին մեր ունեցած գաղափարային անզգայութիւնը սքողելու:

Թող ներքի սակայն մեզ ըսել թէ՛, սոյն անպատեհութեան զիտուր և միակ շարժանքի ընդունել չէ, բայց եթէ՛ գեղարուեստական գաստիարակութեան զգալի պակասը, զոր երբէք չէ խորհուած մեր կրթական ծրագրիներուն մէջ ներմուծել և մասալի ընել մասաղ սերունդին, ոչ թէ՛ անուանապէս և հարեւանցի, այլ և իր ոգւոյն համապատասխանող կերպով մը: օրինակով մը բացատրենք մեր ըսածը: մտէք մեր թղթային վարձարաններուն սեմին ներս, հոն գաշնակ մը անգամ չպիտի կրնար գտնար, որպէս զի երաժշտութեան ընդունակ եղող աշակերտները, զէթ այդ նուագարաններն միջնացաւ նախնական ծանօթութիւն մը կարնան ունենալ: ոչ ձայնակն և ոչ ալ զորոքական երաժշտութեան պէտք եղած մղուած տրուած է մեր վարձարաններուն մէջ՝ զրեթէ կրթական ամէն յարկերու տակ, շարքով:

ԳԵՊԻ ԻՍՄԱՅԻԼԵԷ

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԴԵՐԱՎԵ ԵՒ ԸՆԿ.

Ամերիկեան Դերակ և Ընկ. կը յայտարարեն թէ՛ իրենց նախկին բոլոր յաճախորդաց և թէ՛ ամէն անոնց՝ որոնք կ'ուզեն նոր յաճախորդ ըլլալ, թէ՛ ներկայ Հոկտ. ամսոյ 10էն սկսեալ պիտի բացուի Իսմայիլիէի պողոտային վրայ Իսպրոն Թիլիքի Գիմաց, Գըր լիւս Սլըմանի տակ, իրենց նոր գերակի վաճառատունը:

Ընկերութիւնը ամէն ջանք ի գործ դրած է կերպասներու մաքորին ընտրութեան և գոյներու ամէնու ճաշակին յարմարութեանը:

Մեր կարի ու ձեռք մաքորութեան համար, մեր ունեցած յաճախորդներու գոնուակութիւնը կը բաւէ ապացուցանելու թէ՛ երկու սեռին ալ — արանց և կանանց — հազուածի բոլոր ճիւղերուն մէջ պատրաստ ենք գոնացնելու ամենէն նրբաճաշակներն անգամ:

Մէկ անգամ փորձեցէք և Երբ հաստատէք մեր յայտարարութեան ճշտութիւնը: Կը կրկնենք, կերպասի լաւութիւնը, գործի մաքորութիւնը և ճշգրտակութիւնը կատարաւ է:

335

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԴԵՐԱՎԵ ԵՒ ԸՆԿ.

2-3 ժամ ձայնակն երաժշտութեան դասաւանդութիւններ արամազըրիլ ըրած են աշակերտաց. բայց վստահ եղիք թէ՛ այդ 2-3 ժամերն ալ ի զուր տեղը կը վտանգեն: որովհետեւ գիտէք ինչ կը սովորեցնեն աշակերտաց, անպարագրիլ «Սորձուրդ խորհրդ» և «Սոս զուրաթթ» թերթի երաժշտութեան դասաւանդութեան մը զգացումներով տողորուած է շատ շատ Սուրբ սուրբ Տէր գործութեանցը քառամասն կը սովորեցնէ և այս տափակ ու անճ գրութիւնը լուսահողի Չամուրճի պատուելիին օրերէն մինչև և մեր օրերը կը հասնի և ո՛վ զիտէ մինչև և կ'ըր սեւակաւորութիւն պիտի ունենայ: Ահա մեր վարժարաններուն մէջ աւանդուած երաժշտութեան ողորմելի դասաւանդութիւնները մինչև քաղցեք օտար վարժարանները հաստատի եղէք որ հոն տեղ ոչ թէ միայն գաշնակ պիտի գտնար, այլ աւանդուող 10-15 հոգիէ բաղկացեալ նուագաւորաց խումբ մը որ իր գուարթ եղանակներով, նուրբական օրերու առթիւ յաճախ լսելի ընել կ'ուտայ երազական ընթացի կտորներ:

Աւելորդ է ըսել թէ՛ ներկայ պարագային, գաշնակի գործածութիւնը մեր մէջ ա՛յն աստիճանն տարածուած է որ, ամեն քաղկի զերբամասալի ըլլալուն շնորհիւ, գրեթէ շատ յարկերու տակ անոր գոյութիւնը աչքի կը դարնէ: ասիէ կուզենք հետեւեցնել թէ՛ մեր հայ իրական սեռին գրեթէ վաթսուս ան հարիւր մեր գաշնակ կ'աճէ: արդարութիւնը պարտ կը գնէ վրայ ուղղաճակին խոտովակելու թէ՛ մարդկութեան այդ կէտը կըր գաշնակի մը մտնելու, վստահ եղիք թէ՛, Բուսանի զշխուհոյն Օարմ Սիլվաի վալսով պիտի սկսի և «Բախիլոյ ու յոսան յայնմը» պիտի վերջացնէ իր repertoire: Եթէ իր կարծեցեալ debut ըրածն զաշնակահար օրիորդին կամ տիկնոջ նոյն պահուն համակրական արտայայտութիւններ շտապուին, ըսու տարակոյս մի ունենաք թէ ի նշան երազապիտութեան չիպացած և փրացած գաշնակահար Չարիսանեանին շուրջ մէջէն ևս քովէն:

Միջանկեալ կերպով չի մտնանք ըսել թէ բացառութիւնները մէջ շարքելի են: Չենք կրնար երբէք մեր խնայապատակին մէջ սեղմեցնել թէ՛, որքան անտութիւն և բոլոր զգայութեան ենթակայ ըլլալու է մարդ, որ զուարթ զգացմանց միակ զրոյթը եղող երաժշտութեան հանդէպ այս աստիճան վերապահու և պաղ վերաբերում մը ունենայ, նա՞ որ այրած, միտնող սրտերը կը զովացնէ, մտքերը կը սրէ, վերջապէս հետալի զբաղում մէջ որ հողոյ կարողութիւնը կը գործացնէ և որ աւելին մարդկային սոցիալացման հորազոյն ազգակներէն մին է:

Ուրախակի պարագայ մը որ կայ, այն ալ վերջին 6 տարուան միջոցին արտասահմանի հայութեան դէպի գեղարուեստը աւելի բարեշքը ջուրի ճամբու մը մէջ թեւակոխելն է: Ամերիկային յետոյ Աղէքսանդրի միակ զրոյթը եղող իր նուագաւորաց խումբը, որ քրտնաթոր աշխատութիւնէ մը յետոյ, վտանգելով մի քանի ըստեղծ արգելադրող օժանդակութիւնը, այսօր ամուր խարխիլ մը վրայ յենած՝ իր անզգազոտ քայլերէն կը հնչեցնէ:

Գաշնակն ալ զգաց այդ պակասը որ իր մէջ ունեցած էր, որով մի քանի ամիսներ առաջ ձեռնարկեց թիւնը ունեցաւ «Արաքս» անուն նրբազարդութիւնը կազմելու: օրով աներկբայ ենք թէ սոյն նորակազմ խումբն աշխատութեան արգիւնք է թէ՛ ժամանակէն վայելելու բազմին պիտի արժանանանք:

Որքան ուրախ կ'ըլլանք, երբ կը տեսնենք թէ անշարժութիւնը հետզհետէ կ'անհետի: Օ՛ն ուրեմն, բոլոր սրտէ յաջողութիւն կը մտղթենք գեղարուեստի պաշտպան և սիրահար:

Ներուն, և անոնց՝ որոնք այդ գեղարուեստի սիրահարներուն վրայ կը մտածեն...

1/11/1902 Գահիրէ

ԲԵՆԵՒՈՆ

ՆԱՄԱԿ ԳԱՀԻՐԷՆ

Մեծարդոյ Տեար Եղիշէ Թորոսեան

Տնօրինութիւն «Արշալոյս» լրագրոյ

Աստ

Ազնիւ Տիար:

Այսօր իմանալով որ՝ քաղաքիս ոսկերիչներէն ոմանք, «Փերիկի» լրագրոյ վերջին թիւոյն մէջ, «Ոսկերիչները խորագրով և անմէն» ստորագրութեամբ հրատարակուած յօդուածը՝ ինչ եղած լինելու անհիմն կակածանօք, վըրտացած են ինձ՝ կը վաւթամ ներկայիս յայտարարել թէ՛ այդ յօդուածը գրողը ևս չեմ, թէ ոսկերիչներէ խիստ շատերը իմ բարեկամներս և ես ալ իրենցը լինելով, այդպիսի կակած մը անտեղի էր ունենալ իմ մասին և ըստ իս մի միայն թշնամի զրպարտութիւն մը կրնայ յառաջ եկած ըլլալ այն և թէ ես ալ ոսկերիչաց չափ յայտացած, նետաբերել եմ գիտնալու թէ ո՞վ է այդ անձը որ այնքան գոնիկ լիզու մը գործածած է անուանարկելու համար Ազգին է՛ն պատուաւոր համարուած արհեստարարներու սոյն դասակարգը:

Ընդունեցէք, ազնիւ Տիար, այս առթիւ իմ խորին մեծարանացս հաւատարմէն

Ձերը

ԳԱՌՆԻԿ ՍԻՐՈՒՆԵԱՆ

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

ԼՈՒՐԵՆ

ԱՄԵՆ Տ. Տ. ՍԱՀԱԿ

ԱՐՔԵՊԻՍ ԿՈՊՈՍ ԽԱՊԱԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

62 ԳՈՒԹՈՂ

ԵՒ ՄԻԱՍՏՆՈՒԹԵԱՄԲ ԸՏՏՐՈՒՄ

(Արեւելիցն քաղուած)

Տարաք 12 Հոկտեմբեր 1902

Ատանայէն Պատրիարքարան հասած հեռագիր մը, ընտրողական ժողովի նախագահին կողմէ, կը ծանուցանէ թէ ընտրողական ժողովը գումարուելով շարքով օրը Ատանայի Ս. Աստուածածին Մայր եկեղեցիին մէջ 62 քուէով ու միաձայնութեամբ կ'ընտրուին կաթողիկոս ընտրած և Երուսաղէմի լուսարարապետ Տ. ՍԱՀԱԿ ՍՐԱՊԱՆ ԽԱՊԱԵԱՆԸ, ժողովին կը նախագահէր Կաթող. Պատուիրակ Տ. Մովսէս Նպիսկոպոս: Ներկայ էին բոլոր պատգամաւորները, Մէք. Թուպիլի պէյը և Կաթող. Տեղապահ Տ. Կիրակոս սրբազան: Պատրիարքարանէն հասած հեռագիրը կարդացուելէն անմիջապէս յետոյ, քուէարկութեան ձեռնարկած է ընտրութեան արդիւնքը հեռագրուեցաւ Կայս. Կառավարութեան և Պատրիարքարանի: Բարեկալութիւնները եղան վեհ. սուլթանին համար Տ. Կիրակոս և Տ. Մովսէս Նպիսկոպոսները ու պատգամաւորները շնորհաւորեցին նորընտիր Կաթողիկոսը Ս. Պատրիարք ընտրութեան արդիւնքը հեռագրով:

# Յ. ՓԷՄՊԵՃԵԱՆ

Գ. Ա. Հ. Ի. Բ. ( ԵԳԻՊՏՈՍ )

391

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԵՆ ԱՆՈՒՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ  
Հնագրական Հասցի - ՓԷՄՊԵՃԵԱՆ

ՀԻՆ ԶԱՊԻՑԻ ԴԻՄԱՆ  
Նամակատի Թիւ 129

ուղարկող հարգելի ինձինքն Ս. Հայրապետին, Երուսաղէմի Ս. Պատրիարքին և նորընտիր կաթողիկոսին : Մասնաւոր հեռագիր մին ալ ուղղելով Ատանա, շնորհաւորելով ընտրական ժողովը, միաձայնութեամբ և յաջող ընտրութիւն մը կատարած ըլլալուն համար : Գուհարկուներու թիւը 60 որոշուած էր նախագահ, բայց յետոյ 62ի բարձրացած էր Պատրիարքարանի կողմէ տրուած արտօնութեամբ :

Կենսագրական ճորձեր. — Կրկին շնորհաւոր կաթողիկոսը Տ. Սահակ Սրբազան ճնած է 1849ին ընդ խորհրդով Ե. Իր աշխարհական անունն է Գարեթէ կարապետեան : 18 տարեկան եղած ատեն Երուսաղէմ կ'երթայ Յօրը հետ և 1868ին կ'աշակերտի ժառանգաւորաց վարժարանին : Երեք տարի յետոյ սարկաւագ կը ձեռնադրուի երկու ընկերներու : Աւելի վարդ. Մարտաշտեանի և Վահան վարդապետ Յակոբեանի հետ : Ապա Պոլիս գալով երեք տարի հոս կը մնայ և իր ուսումը կատարելագործելով Երուսաղէմ կը դառնայ, որ վարդապետ կը ձեռնադրուի 1877 ին և ուսուցչական պաշտօն կը վարէ մինչև 1881 : Այս թուականին Մամբրէ վարդապետին (հիմա եպիսկոպոս) հետ իբր նուիրակ կը զբոսի Ռուսիա, ուր կ'ովկասի նահանգը հովուական բաժին կ'իյնայ Սահակ վրդ. Ի. Յ տարի նըստի կաթողիկոսական պաշտօն վարելէն յետոյ, միաբանական ընդհանուր ժողովին որոշումով, լուսարարագետ կ'ընտրուի : Սահակ վարդապետ հանդուցեալ Մակար կաթողիկոսէն եպիսկոպոս կը ձեռնադրուի Ելիսիաձեն դարձին ստանձնեց լուսարարագետի պաշտօնը, զոր մինչև այսօր կը վարէ, միևնոյն ատեն վարելով ժառանգաւորաց վարժարանին ուսուցչութեան և վերին հոկոգութեան աշխատութիւնները : 1892 ին Ս. Երուսաղէմի կողմէ պատուիրակ կը կարգուի Ելիսիաձեայ կաթողիկոսական ընտրութեան, իսկ 1900-1901 ին երկու անգամ պատուիրակ կարգուեցաւ Սոյ կաթողիկոսական ընտրութեան աւթիւ : Տ. Սահակ սրբազան գրական աշխատութեանց ալ նուիրած է ինքզինքը, աշխատակցելով նախկին Սիլոս ամսագրութիւն և դասագիրքեր յորինելով, որոնք են « Պատմութիւն հին կաթողիկոսի », « Բնական պատմ. աշխարհագրութեան », նաև Երուսաղէմի ու լուսատեղիներուն մէջ մեր արարողութեանց և սովորութեանց վերջալ գիրք մը : Բովանդակութիւն եկեղեցական իրաւանց անունով :

Տակաւին Երուսաղէմէն որ և է հեռագիր հասած չէ Ս. պատրիարքին, մինչև լըրագրոյս մամուլը դուրսած պահուն : Նոյն պէս Երուսաղէմի Պատր. Փոխանորդ Տ. Կէ-որդ երեցեան սրբազան երկէ շնորհաւորական հեռագիր մը ուղղած է Երուսաղէմ Տ. Սահակ սրբազանի և այս առաւօտ ալ նամակ մը գրելով ինքզինքն է որ ընդունի հայրապետական այս պաշտօնը, խոստանալով ինքն ալ իր կողմէն ամէն աշակցութիւն ընծայել : Պատրիարքարանի շրջանակներուն մէջ կ'ըսուի թէ Տ. Սահակ սրբազան մայրաքաղաքս եկած միջոցին պիտի մնայ Երուսաղէմատան մէջ : Այս առաւօտ մայրաքաղաքս գտնուող Ատանայի և Եղզատցի վաճառականներ ու սեղանաւորներ շնորհաւորական հեռագիրներ ուղղեցին Տ. Սահակ Սրբազանի : Ս. Պատրիարքը այս շարժութեան ժողովը պիտի հրահրէ, ուր ի դիմաց վարչութեան ժողովականները շնորհաւորական հեռագիր պիտի ուղղեն Տ. Սահակ սրբազանի :

**ԱՐՄԱՆԱՍ ԲԱՇԱ ԲԱՐՈՂ**  
Նորին Վեմութեան Արքայապետ Բարթող Պէյի Բաշայութեան աստիճանին բարձրացած ըլլալուն առթիւ, Գահիրէի հայերը հարկերէ աւելի ստորագրութեամբ շնորհաւորական հեռագիր մը ուղղած են Ն. Վեմութեան, որ նոյն հեռագիրը ըստ ստորագրողներէն Ազն. Տիարց Յ. Պատմական մանեան և Տ. Չամբէրթէնեաններու պատասխանած է հետեւեալ հեռագրով :

Աղէքսանդրիա, 6 Նոյ. 1902  
Տեղաբ. Պատմական և Չամբէրթէնեան Գահիրէ  
Ձեր հեռագիրը զիս շափազանց յուզեց, կը խնդրեմ որ թարգման ըլլաք խորին շնորհակալութիւնս արտայայտելու համար բոլոր հայրենակիցներուս, որոնք բարեհաճեցան ձեզ միանալով իրենց շնորհաւորութիւնները յայտնել :  
ԲԱՐՈՂ

**ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ**  
Կը լսենք թէ՛ Տիար Յ. Օհանեան, վատհամարութեան դատ բացած է ընդդէմ Տ. և Օ. Օսեանի, սկզբունքով ընդունելով հանդերձ պատույն տալով : Եւ արժանի անօրինակու հարց Հնչակեան կուսակցութեան խնդրած է, անոր միջամտութեամբ խնդիրը կուսակցական իրաւասութեան սահմանին մէջ դրուած ըլլալուն համար :

**ՊԱՏՎԱՐՈՒԹԻՒՆ**  
Հաւաստի աղբիւրներէ կ'իմանանք թէ՛ Աղբիւրանդիոյ հայերը պատգամաւորութիւն մը զրկել որոշած են կառավարիչ բաշային, բացառելու համար անոր թէ՛ քահանայական ձեռնադրութեան նկատմամբ կառավարութեան եղած դիմումներն անտեղի են, և թէ՛ հայ ժողովուրդն է որ լիազօր իրաւունք ունի այդ խնդրին մէջ, և միւս կողմէ՛ կառավարական միջամտութիւն մը զրու եկեղեցական խնդրոց մէջ, կրնայ անպատեհութիւններ յառաջ բերել :

**ՀԱՅՊԱՆ ԹԱՎԱՆՆԵՐ**  
Կովկասահայ թերթերը կը գրեն թէ՛ Ռուսական կառավարութիւնը կը պահանջէ որ դէպքերու հետեւնքով հոն ապաստանող 40,000 հայերը կամ Ռուսաստան կուսակցութիւնը ընդունին և կամ երկրէն դուրս ելլեն :  
Այս առաջարկին պայմանաւոր Օգոստոս 23 ին լրացած ըլլալով՝ հոն դադարող հայերը սկսած են իրենց երկիրը թուրքիս կամ աւելի լաւ պիտի ըլլայ ըսել, իրենց հայրենիքը դիմել :

**ՍՊԱՆԱԼԻԲ**  
Նոր-Բարի մէջ կը կարգանք թէ՛ հասարակութիւն ժամհարեան եղբայրներէն Պ. Ի. սահակ ժամհարեանցի վրայ՝ որ Եւրոպի հիւանդանոցին բացման հանգիսին ներկայ գտնուելու համար հոն կը գտնուէր, դաշտիներով և ռէվոլվերներով զինուած տասներկու քի չափ առաջակներ յարձակելով, ընդ կերպով անկէ 30,000 ռուբլի չէք մը առած են :  
Եղբանագործները մահ սպառնացած են հոշակաւոր մարդասէրին և իր երկու եղբայրներուն, որոնք իրենց անձնական գանձը արամագրելի ըրած են միշտ անօգնական հայ ուսանողներու և ընտանիքներու նպաստելու համար :  
Ստտիկանութիւնը աւազակներէն երկուքը միայն կրցած է ձերբակալել :

**Ի Ա Ո Ն Լ Ո Ւ Ր Ե Ր**  
Կ. Պօլսէն ստացուած պաշտօնական լուս.

րի մը յենլով, Նիւ-Բորֆ-Քույնց կ'ըսէ թէ՛ Սուլթանը Հալէպի կուսակալ Էնիս բաշան վերջնականապէս պաշտօնի կ'ըրած է :  
Էնիս բաշա 1895ին Տիրանական մէջ գործուած անպատեհի վայրագութեանց կազմակերպիչն էր և երկու տարիներէ հետեւ Անդլիական, Աւստրիական և Ֆրանսական զեկոտնները մեծամեծ ջանքեր կ'ընէին որ Էնիս բաշան հրաժարեցուցուի :  
— Իբրանուու վառավարիչ անուանուած է սուլթանի թիկնապահներէն Մուղաֆէր բաշա, որ այս առթիւ վէճերութեան և Միջիւրեմեան աստիճանին բարձրացած է :  
— Լոնտոնէն Հոկտեմբեր 3 թուականաւ կը տեղեկացունի թէ՛ Նոյն Տրաշէ Բրտիսէ՛ թաւաղի վիեննական թղթակցին վերադարձ մէջ յօդուածին մէջ կը կարծէ թէ Մակեդոնական ապստամբներու նպատակը Կ. Պօլսէն Սէրէզի ճամբով դէպի Սէլանիկ և Մանսիթր գալու էր կաթողիկոսի դուրսէն է, որ Տէմիր Հիտարի Սթրուս գետէն կ'անցնէ : Այս կամուրջը խորտակելով և մտտակալ լքանց մէջ հաստատուելով յեղափոխական արեւելեան և արեւմտեան երազական թուրքի միակ հարգապետութիւնը կ'ուզեն դարձնել :

Թուրքերը վտանգը գուշակելով հարկ եղած երևութեան նախապաշտութիւններն ըրած են :  
**Ի Ե Ղ Ա Թ Ի Ի Ո Ւ Ա Մ**  
Բարեկ թան Լրագիրը հետեւեալ բաներով կը բացատրէ Մատթէոս էֆէնիի Պալեոզանի սպանութեան խնդիրը :  
« Հնչակեան Կովիսէն սպաննել տուած է Իզմիրի մէջ Պալեոզան անունով ականաւոր հայը : »  
Թանի կողմէ տրուած այս բացատրութիւնը՝ նպատակաւոր խեղճիւրում մը ըլլալ կը կարծուի :

**Լ'ԱՐՄԷՆԻ**  
Պայազիտէն Եւրոպիան կը գրեն թէ՛ կ'ըսէ Լ'Արմէնի, սուլթանը զայրանալով Պրուսիէ գումարուած հայասիրաց գնդերէն դէմ, Պայազիտէ մէջ երկու հայեր կ'սպանան հանել տուած է : մին խոստորացի խաչատուր, ուսուցիչ, և միւսը՝ Կողբի Աւետիս, հերոս :

**ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ**  
Բ. Խ Տ Ի Վ Ը  
Ն. Բ. Խոմիլի երեկ կէս օրէն տալ ժամը 11ը քանի մը վայրկեան անցած, մասնաւոր կառավարման Գահիրէ ժամանեց :  
Թնդանօթի 21 հարուածներ արձակուեցան Ն. Բարձրութեան կայարան հասնելու պահուն :  
Բարձրատիճան պաշտօնեայք, ինչպէս նաև ամէն ազգերու ներկայացուցիչները կայարան դիմած էին, որ շնորհակալ համար Նորին Բարձրութիւնը :  
Անդլիական և տեղական զինուորական նուազածու խուճերը և զօրաց վաշտեր դիմաւորելու համար կայարանը կը գտնուէին :  
Ն. Բարձրութիւնը այսօր պաշտօնական ընդունելութիւն պիտի կատարէ :  
**Բ Օ Լ Է Ր Ա Ն**

Ժամանակէ մը ի վեր արգէն համաճարակին ցուցակը հրատարակելէ դադարած ենք և քանի մը օրէ հետէ ալ Գահիրէի մէջ և իսկ դէպք մը կը ծանուցուի : հետեւաբար քօլէրան Եղիպտոսէն վերջնապէս կծիկը

գնելու վրայ է :  
Յուլիս 15 էն մինչև այսօր բոլոր եգիպտոսի մէջ տեղի ունեցած գէղերու և մահաբեր թիւն է 39,550 մեկուկ առնելով նաև առողջացածները, որոց թիւն է 5815.

**Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ե Ր**  
Նիւ 5 Նոյ. — Արշակն ճարտարապետանը մանուան դասադասած է գլխաւոր որուն արհեստն էր Կիներ պաննելը :  
Մարտի 6 Նոյնիս. — Պ. Կօզօրսան Արշակաւոր իոյ հաւար նաւ նստաւ, իր կողմը կողմը Ն. Բ. Խիլիկն Անկախացնելու հաւար :  
Գիւն 6 Նոյնիս. — Կիլիկոս Կաշար Անկախ մեկնեցաւ :  
Սիւնիս 6 Նոյնիս. — Չօրալար Էմիթրօն իր խոմբերը Գօլա կը հարախէ Վազիրիսներուն դէմ իր վիճաբանական գործողութիւնները սխալելու համար :  
Բարից 7 Նոյնիս. — Խորհրդարանը գործարարներուն պատճառով լինելու հաւար կաշիւն յանձնախմբի մը համար եղած առաջարկը քննարկեց :  
Խորհրդարանը անվաւեր նկատեց սորին Արշակն մէջ Պօլիս օր Գաւրիանի վրայ ստատուած ղեկորութիւնը :  
Լիլիկի 7 Նոյնիս. — Վեց նաւար գործարարներ իրաւարարութեան սկզբունքը կը մերժեն ղեկորութիւնը :

**ՆԱՄԱԿԱՏՈՒՓ**  
Մինչև Կ. Թ. — Բաթըր նամակ ունիք : Բուն իրականութիւնները պարզեցէք մեզի : Կարենք ձեր խնդիրը ընդհանրական գոյն չունի : Իրողութիւնները պարզեցէք առանց սեթեւեթի առանձին նամակաւ :  
**Ա Ջ Դ**  
Երիտասարդ մը քաջահմուտ տուարակալ և փորձառու՝ որ իր բոլոր պաշտօնավարած տեղերէն վկայեալ է, պատրաստ է այցելու հաշուակալի պաշտօն ստանձնել զիրարամտեղի ամառվճարներով :  
Դիմել « Արշալոյս » ի Խմբագրութեան :

**ՊԱՏՆԵՐԱՋԱՐԿ ԿԱԶՄԵՆ-ԵՐՈՒՐԱՆ**  
Ստացանք վազգէն-Երզրանը, բանաստեղծութիւններու, ազգային, յեղափոխական, սիրային և ժողովրդական երգերու ճոխ հաւաքածու, որուն անհամբեր կը սպասէր հայ հասարակութիւնը :  
60Գ մեծագիւր երեսներէ բաղկացած, ընտիր թուղթի վրայ, գեղեցիկ պատկերներով զարդարուն սոյն Երզրանը կուգայ մեծ պակաս մը լրացնելու մեր ազգային գրականութեան մէջ :  
Գինն է, ճամբու ծախքով 1 ու կէս տոլար  
Գնել փափաքողք պէտք է դիմել  
**K. KHORANIAN**  
378 P. O. Box, Lynn Mass. (U. S. A.)  
Ձեռքէ կը ծախուի Ամերիկա « Հայրենիք » սպարանին մէջ, և ի Գահիրէ « Արշալոյս » ի խմբագրութեան քով :  
Արտասանմանի համար 7 Ֆրանք  
Պարսկաստանի « 6 »  
Մանիթ. — Սոյն երգարանը որչափ որ քանի մը անգամ անհատական ջանքով հրատարակ եղած է, սակայն, ինչպէս գրքին կըցուած յայտարարութիւնները կը ցուցնեն, ամբողջ հասարակ յոտկացուած է զուտ բարեսիրական գործի մը :

